## ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ ԹԻՎ 7

## 26.12.2025Թ. ԿՆՔՎԱԾ N «ՉՀ-ԷԱՃԱՊՁԲ-2026/1-10» ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Չարենցավան «26» 01 2026թ.

Չարենցավանի համայնքապետարանը, ի դեմս համայնքի ղեկավար Հ. Կ. Շահգալդյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ «Գնորդ 1»), մի կողմից, և «ՍՈՆՔԻ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ա. Աֆինյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ «Վաճառող»), մյուս կողմից, երկուսը միասին այսուհետև՝ Կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ, հիմք ընդունելով 26.12.2025թ. կնքված N «ՉՀ-ԷԱՃԱՊՁԲ-2026/1-10» գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 8.1.1-րդ, 8.5-րդ, 8.15-րդ կետերը և այն հանգամանքը, որ փոփոխությունը չի դասվում ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 56-րդ կետով սահմանված արհեստական փոփոխությունների շարքին, կնքեցին սույն համաձայնագիրը հետևալի մասին:

### 1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

Հետագա համագործակցության նպատակով՝ Կողմերը որոշեցին՝

1.1 Սույն համաձայնագրով նախատեսված «Գնորդ 1»-ի իրավունքներն ու պարտականությունները գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով վերապահվում է Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի Արզական գյուղի մսուր մանկապարտեզ համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը (այսուհետ՝ «Գնորդ 2»):

1.2 Հաստատել գնման ժամանակացույցը՝ համաձայն կից հավելվածի (Հավելված 1-ը կցվում է):

1.3 Հաստատել ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակացույցը (վճարման ժամանակացույց)՝ համաձայն կից հավելվածի (Հավելված 2-ը կցվում է):

1.4 Ապրանքը համաձայնագրով սահմանված ժամկետում «Վաճառող»-ի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 2 (երկու) օրից ավելի:

1.5 «Վաճառող»-ի կողմից համաձայնագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք, որը չի կարող փոխարինվել «Գնորդ 2»-ի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 2 (երկու) օրից ավելի:

1.6 Համաձայնագրի գինը կազմում է 1463373.1 (մեկ միլիոն չորս հարյուր վաթսուներեք հազար երեք հարյուր յոթանասուներեք դրամ տասը լումա) ՀՀ դրամ, ներառյալ՝ ԱԱՀ-ն:

Համաձայնագրի գինը ներառում է համաձայնագրի կատարումն ապահովելու նպատակով «Վաճառող»-ի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և «Վաճառող»-ն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ «Գնորդ 2»-ը նվազեցնելու այդ գինը:

1.7 «Գնորդ 2»-ն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները «Վաճառող»-ի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ համաձայնագրի վճարման ժամանակացույցով նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ համաձայնագրի վճարման ժամանակացույցով նախատեսված ամիսներին, 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում:

1.8 Մատակարարված ապրանքն ընդունվում է «Գնորդ 2»-ի և «Վաճառող»-ի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը «Գնորդ 2»-ին հանձնելու փաստը ֆիքսվում է «Գնորդ 2»-ի և «Վաճառող»-ի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև համաձայնագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ «Վաճառող»-ը «Գնորդ 2»-ին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը «Գնորդ 2»-ին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության երկու օրինակ (հավելված 3):

1.9 Հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրվում է, եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է համաձայնագրի պայմաններին: Հակառակ դեպքում համաձայնագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և «Գնորդ 2»-ը՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար համաձայնագրով նախատեսված միջոցները.

բ) «Վաճառող»-ի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

1.10 «Գնորդ 2»-ը հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված տասն աշխատանքային օրվա ընթացքում «Վաճառող»-ին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

1.11 Եթե համաձայնագրի 1.10 կետով սահմանված ժամկետում «Գնորդ 2»-ը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և համաձայնագրի 1.10 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը «Գնորդ 2»-ը Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1 Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

2.3 Սույն Համաձայնագրում Կողմերի չնշված պարտավորությունները թողնվում են անփոփոխ:

2.4 Սույն Համաձայնագիրը և հավելվածները կազմված են 7 (յոթ) էջից, կնքվում են հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

## 3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

| «ԳՆՈՐԴ 1» | «ԳՆՈՐԴ 2» | «ՎԱՃԱՌՈՂ» |
|---|---|---|
| Չարենցավանի համայնքապետարան<br>ք. Չարենցավան Կ. Դեմիրճյան հրապարակ թիվ 1<br>ՀՀ ՖՆ ԳՎ<br>Հ/Հ 900132111023<br>ՀՎՀՀ 03022497 | ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի Արզական գյուղի մսուր մանկապարտեզ ՀՈԱԿ<br>գ. Արզական<br>Բաբաջանյան փողոց թիվ 3<br>«ՎՏԲ-ՀԱՅԱՍՏԱՆ ԲԱՆԿ» ՓԲԸ<br>Հ/Հ 16028401101400<br>ՀՎՀՀ 02807295 | «ՍՈՆՋԻ» ՍՊԸ<br>ք. Հրազդան, Կենտրոն 37/93<br>«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ<br>Հ/Հ 163158085866<br>ՀՎՀՀ 03033793<br>էլ. հասցեն<br>baghdasaryan_1978@mail.ru<br>հեռ. (+37493) 98-98-09 |
| Համայնքի ղեկավար՝<br>Հ. Կ. Շահգալդյան | Տնօրեն՝ Ա. Հովսեփյան | Տնօրեն՝ Ա. Ափինյան |
| (ստորագրությունը)<br>Կ.Տ | (ստորագրությունը)<br>Կ.Տ | (ստորագրությունը)<br>Կ.Տ |

Հավելված N 1
26.12.2025թ. կնքված «ՉՀ-ԷԱՃԱՊՁԲ-2026/1-10» ծածկագրով
պայմանագրում փոփոխություններ կատարելու նպատակով
«26» 01 2026թ. կնքված թիվ 7 համաձայնագրի

# ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

| Ապրանքի | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | չափման միավորը | միավոր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | մատակարարման | | |
| | | | | | | | հասցեն | ենթակա քանակը | ժամկետը |
| 1 | 15811100/502 | Հաց, բարձր տեսակի | կգ | 300 | 450000 | 1500 | գ. Արզական Բաբաջանյան փողոց թիվ 3 | 1500 | 2026 թվականի հունվար-դեկտեմբեր ամիսներ |
| 7 | 15311100/504 | Կարտոֆիլ, ուշահաս | կգ | 178.8 | 143934 | 805 | գ. Արզական Բաբաջանյան փողոց թիվ 3 | 805 | 2026 թվականի հունվար-ապրիլ, սեպտեմբեր-դեկտեմբեր ամիսներ |
| 31 | 03222128/502 | Խնձոր, ուշահաս | կգ | 165.09 | 41272.5 | 250 | գ. Արզական Բաբաջանյան փողոց թիվ 3 | 250 | 2026 թվականի հունվար-ապրիլ, սեպտեմբեր-դեկտեմբեր ամիսներ |
| 47 | 15332250/501 | Մրգադոնդող (կիսել) | կգ | 1399.98 | 48999.3 | 35 | գ. Արզական Բաբաջանյան փողոց թիվ 3 | 35 | 2026 թվականի հունվար-դեկտեմբեր ամիսներ |
| 48 | 15842310/501 | Կոնֆետ կարամել | կգ | 1200 | 42000 | 35 | գ. Արզական Բաբաջանյան փողոց թիվ 3 | 35 | 2026 թվականի հունվար-դեկտեմբեր ամիսներ |
| 51 | 15831000/501 | Շաքարավազ սպիտակ | կգ | 379.99 | 83597.8 | 220 | գ. Արզական Բաբաջանյան փողոց թիվ 3 | 220 | 2026 թվականի հունվար-դեկտեմբեր ամիսներ |
| 52 | 15831710/501 | Հալվա | կգ | 1000 | 30000 | 30 | գ. Արզական Բաբաջանյան փողոց թիվ 3 | 30 | 2026 թվականի հունվար-դեկտեմբեր ամիսներ |
| 57 | 15821500/503 | Պրյանիկ | կգ | 649.98 | 32499 | 50 | գ. Արզական Բաբաջանյան փողոց | 50 | 2026 թվականի հունվար-դեկտեմբեր |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | թիվ 3 | | ամիսներ |
| 62 | 15112150/501 | Հավի կրծքամիս, պաղեցված | կգ | 2205.11 | 220511 | 100 | գ. Արզական Բաբաջանյան փողոց թիվ 3 | 100 | 2026 թվականի հունվար-դեկտեմբեր ամիսներ |
| 67 | 15541100/501 | Պանիր, լոռի | կգ | 1799.99 | 89999.5 | 50 | գ. Արզական Բաբաջանյան փողոց թիվ 3 | 50 | 2026 թվականի հունվար-դեկտեմբեր ամիսներ |
| 68 | 15541200/501 | Պանիր, չանախ | կգ | 1746 | 34920 | 20 | գ. Արզական Բաբաջանյան փողոց թիվ 3 | 20 | 2026 թվականի հունվար-դեկտեմբեր ամիսներ |
| 72 | 15421200/501 | Եգիպտացորենի ձեթ, ռաֆինացված (զտած) | լիտր | 1200 | 210000 | 175 | գ. Արզական Բաբաջանյան փողոց թիվ 3 | 175 | 2026 թվականի հունվար-դեկտեմբեր ամիսներ |
| 93 | 15613350/501 | Վարսակածավարի փաթիլներ (հերկուլես) | կգ | 396 | 35640 | 90 | գ. Արզական Բաբաջանյան փողոց թիվ 3 | 90 | 2026 թվականի հունվար-դեկտեմբեր ամիսներ |

**«ԳՆՈՐԴ 1»**
**Չարենցավանի համայնքապետարան**
**ք. Չարենցավան Կ. Դեմիրճյան հրապարակ թիվ 1**
**ՀՀ ՖՆ ԳՎ**
**Հ/Հ 900132111023**
**ՀՎՀՀ 03022497**

**Համայնքի ղեկավար՝**
**Հ. Կ. Շահգալդյան**

**(ստորագրությունը)**
**Կ.Տ**

**«ԳՆՈՐԴ 2»**
**ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի Արզական գյուղի մսուր մանկապարտեզ ՀՈԱԿ**
**գ. Արզական Բաբաջանյան փողոց թիվ 3**
**«ՎՏԲ-ՀԱՅԱՍՏԱՆ ԲԱՆԿ» ՓԲԸ**
**Հ/Հ 16028401101400**
**ՀՎՀՀ 02807295**

**Տնօրեն՝ Ա. Հովսեփյան**

**(ստորագրությունը)**
**Կ.Տ**

**«ՎԱՃԱՌՈՂ»**
**«ՍՈՆՋԻ» ՍՊԸ**
**ք. Հրազդան, Կենտրոն 37/93**
**«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ**
**Հ/Հ 163158085866**
**ՀՎՀՀ 03033793**
**էլ. հասցեն baghdasaryan_1978@mail.ru**
**հեռ. (+37493) 98-98-09**

**Տնօրեն՝ Ա. Աֆինյան**

**(ստորագրությունը)**
**Կ.Տ**

Հավելված N 2
26.12.2025թ. կնքված «ԶՀ-ԷԱՃԱՊՁԲ-2026/1-10» ծածկագրով
պայմանագրում փոփոխություններ կատարելու նպատակով
«26» 01 2026թ. կնքված թիվ 7 համաձայնագրի

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ապրանքի | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2026 թվականին՝ ըստ ամիսների, այդ թվում | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 15811100/502 | Հաց, բարձր տեսակի | 450000 | 450000 | 450000 | 450000 | 450000 | 450000 | 450000 | 450000 | 450000 | 450000 | 450000 | 450000 | 450000 |
| 7 | 15311100/504 | Կարտոֆիլ, ուշահաս | 143934 | 143934 | 143934 | 143934 | 143934 | 143934 | 143934 | 143934 | 143934 | 143934 | 143934 | 143934 | 143934 |
| 31 | 03222128/502 | Խնձոր, ուշահաս | 41272.5 | 41272.5 | 41272.5 | 41272.5 | 41272.5 | 41272.5 | 41272.5 | 41272.5 | 41272.5 | 41272.5 | 41272.5 | 41272.5 | 41272.5 |
| 47 | 15332250/501 | Մրգադոնդող (կիսել) | 48999.3 | 48999.3 | 48999.3 | 48999.3 | 48999.3 | 48999.3 | 48999.3 | 48999.3 | 48999.3 | 48999.3 | 48999.3 | 48999.3 | 48999.3 |

| | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 48 | 15842310/501 | Կոնֆետ կարամել | 42000 | 42000 | 42000 | 42000 | 42000 | 42000 | 42000 | 42000 | 42000 | 42000 | 42000 | 42000 | 42000 |
| 51 | 15831000/501 | Շաքարավազ սպիտակ | 83597.8 | 83597.8 | 83597.8 | 83597.8 | 83597.8 | 83597.8 | 83597.8 | 83597.8 | 83597.8 | 83597.8 | 83597.8 | 83597.8 | 83597.8 |
| 52 | 15831710/501 | Հալվա | 30000 | 30000 | 30000 | 30000 | 30000 | 30000 | 30000 | 30000 | 30000 | 30000 | 30000 | 30000 | 30000 |
| 57 | 15821500/503 | Պրյանիկ | 32499 | 32499 | 32499 | 32499 | 32499 | 32499 | 32499 | 32499 | 32499 | 32499 | 32499 | 32499 | 32499 |
| 62 | 15112150/501 | Հավի կրծքամիս, պաղեցված | 220511 | 220511 | 220511 | 220511 | 220511 | 220511 | 220511 | 220511 | 220511 | 220511 | 220511 | 220511 | 220511 |
| 67 | 15541100/501 | Պանիր, լոռի | 89999.5 | 89999.5 | 89999.5 | 89999.5 | 89999.5 | 89999.5 | 89999.5 | 89999.5 | 89999.5 | 89999.5 | 89999.5 | 89999.5 | 89999.5 |
| 68 | 15541200/501 | Պանիր, չանախ | 34920 | 34920 | 34920 | 34920 | 34920 | 34920 | 34920 | 34920 | 34920 | 34920 | 34920 | 34920 | 34920 |

| | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 72 | 15421200/501 | Եգիպտացորենի ձեթ, ռաֆինացված (զտած) | 210000 | 210000 | 210000 | 210000 | 210000 | 210000 | 210000 | 210000 | 210000 | 210000 | 210000 | 210000 | 210000 |
| 93 | 15613350/501 | Վարսակաձավարի փաթիլներ (հերկուլես) | 35640 | 35640 | 35640 | 35640 | 35640 | 35640 | 35640 | 35640 | 35640 | 35640 | 35640 | 35640 | 35640 |

*Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով՝ ըստ փաստացի մատակարարված խմբաքանակների:

«ԳՆՈՐԴ 1»
Չարենցավանի համայնքապետարան
ք. Չարենցավան Կ. Դեմիրճյան հրապարակ թիվ 1
ՀՀ ՖՆ ԳՎ
Հ/Հ 900132111023
ՀՎՀՀ 03022497

Համայնքի ղեկավար՝
Հ. Կ. Շահգալդյան

______________________
(ստորագրությունը)
Կ.Տ

«ԳՆՈՐԴ 2»
ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի Արզական գյուղի մսուր մանկապարտեզ ՀՈԱԿ
գ. Արզական
Բաբաջանյան փողոց թիվ 3
«ՎՏԲ-ՀԱՅԱՍՏԱՆ ԲԱՆԿ» ՓԲԸ
Հ/Հ 16028401101400
ՀՎՀՀ 02807295

Տնօրեն՝ Կ. Հովսեփյան

______________________
(ստորագրությունը)
Կ.Տ

«ՎԱՃԱՌՈՂ»
«ՍՈՆՁԻ» ՍՊԸ
ք. Հրազդան, Կենտրոն 37/93
«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ
Հ/Հ 163158085866
ՀՎՀՀ 03033793
էլ. հասցեն
baghdasaryan_1978@mail.ru
հեռ. (+37493) 98-98-09

Տնօրեն՝ Ա. Աֆինյան

______________________
(ստորագրությունը)
Կ.Տ